

## ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՋՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

### Գարշապար

Այս բառը հանդիպում է Մ՝ դարի ամենավաղ գրական հուշարձաններում և այժմ էլ գործածական է նոր գրական հայերենում: Նշանակել է «կրունկ», հնում՝ նաև «ոտնահետք»:

Ստուգաբանության որևէ լուրջ փորձ չի եղել:

Գարշապարը ակնհայտ իրանական կերպարանք ունի, և պար-ը լիովին ստուգաբանելի է իրանական աղբյուրներով: Այն ծագում է պարթևական pāδ (p'd) «ոտք» բառից, որ հանգում է իրան. \*pād-ին. հմմտ. ավ. pād-, հ. պրսկ. pada- «ոտք»: Բառի «ոտնահետք» իմաստի համար հմմտ. ավ. pādā- «քայլ, հետք, ոտնահետք»:

Առայժմ անբացատրելի է մնում գարշ-ը:

### Թշուառ

Այս բառի իրանական ծագումը կասկած չի հարուցում. այն արձանագրված է Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի աշխատություններում, բերված է մեր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ:

Այժմ մենք կարող ենք նշել պարթևական պահպանված dušīarr (dwsīr) «գոթախտ, շարաբախտ, թշվառ» բառը<sup>1</sup>, որի ձևը և իմաստը լիովին փարատում են եղած կասկածները:

### Խաւս

Հայերեն գրական լեզվում ու բարբառներում լայնորեն տարածված և մեծաքանակ ածանցյալների ունեցող այս արմատը հավաստի ստուգաբանություն չունի: Ստուգաբանության զանազան փորձերը, որոնք նշված են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (այսուհետև համառոտմամբ՝ ՀԱԲ, 2<sup>2</sup>, էջ 434), հեռու են ճշմարտանման լինելուց:

Խաւս-ը ամենայն հավանականությամբ ծագում է իրանական աղբյուրից և գալիս է իրան. vaxša- «խոսք» նախաձևի (ավ. vaxša- «խոսք, հրաման», մ. պրսկ. vaxš «խոսք») չ>s անցում ունեցող (սկյութերեն) տարբերակից՝ v-x>x-v դրափոխությամբ: Հետաքրքրական է նշել, որ համապատասխան դրափոխություն առկա է նաև իրան. օրմուրի լեզվում՝ ɣuš, ɣwoš «խոսել»<sup>2</sup>:

### Խռաւն

Դասական շրջանից հանդիպող այս բաղմիմաստ բառի հիմնական իմաստըն է համարվում «վրան, աղավաղ»<sup>3</sup>, որից բխեցվում են «կամար», «կա-

<sup>1</sup> Հմմտ. Основы иранского языкознания. Среднеиранские языки. М., 1981, с. 199

<sup>2</sup> Հմմտ. H. W. Bailey, Dictionary of Khotan Saka. Cambridge, 1979, p. 195.

մարածե դահլիճ», «տաճար», «տաճարի սեղան», «տուն», «հարկաբաժին», «խորշ» իմաստները: Չնայած Պ. դր Լադարդի հավանական ստուգաբանությանը՝ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 22, էջ 406) այդ բառը գնում է շատուգաբանվածների շարքում: Չունենալով նոր տվյալներ՝ հոգնածի հեղինակը իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության իրանական փոխառությունների ցանկում այդ բառը չի դրել: Այժմ կարելի է բերել հավաստի զուգահեռ միջին պարսկերենից՝ xvaran «խնջույթի դահլիճ, վրան, տաղավար» («banquet-hall; tabernacle»):

Այսպիսով, խոբան բառը ծագում է իրանական աղբյուրից. xvaran-խոբան բառերի հնչյունական փոխհարաբերությունը նույնն է, ինչ՝ axvar — ախոռ, axvarž — ախոլիժ, xvarak — խարակ բառերինը:

#### Կ ա ր շ և

Կարշև «ուժ, զորություն» բառը հազվագյուտ գործածված բառերից է, որ հնում հանդիպում է միայն բաղադրություններում՝ կարշեել, կարշեղագոյն, կարշեղութիւն: Առկա է նաև առանց ր-ի՝ կաշեել, կաշմբուն և առանց ն-ի՝ կարշապիղ ձևերի մեջ:

Առաջարկված ստուգաբանությունները, որոնք թվարկված են Հ. Աճառյանի կողմից (ՀԱԲ, 22, էջ 559), հեռու են հավանական լինելուց:

Կարշև-ը ծագում է իրան. \*karšon կամ, թերևս, \*kaδišon ածանցավոր ձևերից որևէ մեկից, -išon ածանցով կազմված բառերի համար պետք է հիմք ծառայեր հայ. կար- արմատի իրանական ձևը՝ kar- (հմտ. պրթ. karī «ակտիվություն», մ. պ. kar «ուժ ունենալ, ի վիճակի լինել կարողանալ») կամ թերևս, kaδ- (հմտ. սողդ. k'δy «կարի, հույժ»): Ավանդված է պրթ. karišon «գործ, ստեղծագործություն» բառը՝ kar- «անել» արմատից<sup>3</sup>, որ, սակայն, իմաստով հեռու է:

#### Կ ո յ ս

Կոյս «կողմ» բառը բազմիցս հանդիպում է հայ հին մատենագրության մեջ և այժմ էլ գործածական է բաղադրությունների մեջ՝ կուսակալ, մեկուսի, փառակուսի, այլև նորակազմ կուսակից, կուսակցական, կուսակցություն: Թեև Ն. Ազունցի և Յ. Մարքվարտի կողմից փորձ է արվել այն կապելու pāt-kōs բառի kōs -ի հետ, բայց Հ. Աճառյանը (ՀԱԲ, 22, էջ 630) բերված ապացույցները անբավարար է համարում և բառը գնում է շատուգաբանվածների մեջ:

Այժմ, երբ հայտնի է պրթ. և մ. պրսկ. kōs «կողմ» բառը, հայ. կոյս-ի իրանական ծագումը կասկած չի հարուցում:

#### Հ ա լ ա ն, Հ ա լ ա ս տ

Հայ մատենագրության մեջ V դարից լայնորեն ավանդված այս բառերը հավաստի ստուգաբանություն չունեն: Ա. Մեյլի փորձը հալան-ը կապելու հալ «թռչուն» բառի հետ իրավամբ մերժվում է Հ. Հյուբշմանի կողմից: Անհավանական են նաև մյուս փորձերը, որոնց թվարկումը տրված է Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (32, էջ 68 և 70):

Այս բառերի ստուգաբանության բանալին տալիս է հալալ բառի Հ. Բեյլիի ստուգաբանությունը<sup>4</sup>՝ խոտան-սակյան hol «կարողանալ, ի վիճակի լինել» բառի կապակցությամբ: Բեյլին այն բխցնում է vat- արմատից fra-նախա-ծանցով՝ fra-vat- > haut- > hot, ընդ որում հիշատակում է նաև սողդ. 'wt

<sup>3</sup> Հմտ. Основы иранского языкознания. Среднеиранские языки, с. 194.

<sup>4</sup> H. W. Bayley. Op. cit., p. 498.

«հավատ» զուգահեռը և որպես փոխառություն հայ. հաւատ բառը: Ըստ Բեյ-լիի fra- նախածանցը կարող է հանդես գալ ոչ միայն hra-> հայ. հրա-, այլև hā-> հայ. հա- ձևով: Այս դեպքում hoī-ի հետ միասին նրա հիշատակած hauva- «ուծ» ձևից կազմված hauvani և(-asta- ածանցով) ածականական hauvastu «ուծեղ, զորեղ» ձևերը կարող էին հիմք ծառայել հաւաւ և հաւաւս ձևերի համար:

### Հ ր ա շ ա կ ե ր տ

Հրաշ արմատը Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3<sup>2</sup>, էջ 131—132) համարում է ասորական փոխառություն, սակայն միաժամանակ նշում է, որ ավ. fraša, պհլ. fraš բառերի համար «սքանչելի» իմաստի վերականգնումը ցույց է տալիս, որ հրաշ-ի բուն աղբյուրը իրանականն է: Այժմ այդ ստուգաբանությունը կասկած չի հարուցում: Նրա օգտին են խոսում նաև հրաշաղէտ, հրաշագան, հրաշակերտ բառերը, որոնց երկրորդ բաղադրիչները իրանական են, և որոնք հավանաբար ամբողջովին են փոխառված: Սրա համար որպես լրացուցիչ ապացույց բերենք irašīrōd միջին իրանական (մանիքեական տեօստե-րում հանդիպող) բառը<sup>5</sup>, որ հայերեն հրաշակերտ-ի տարբերակն է:

### Մ ն գ

Մոգ արմատը, որ հանդիպում է մոզանալ, մոզացուցանել բայաձևերում, ունի «մեծ, շատ, զորեղ» իմաստը: Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3<sup>2</sup>, էջ 337—338) սրանք համարում է անստույգ ձևեր, որովհետև ձեռագրական տարբերակներում գ-ի փոխարեն հանդիպում է լ:

Եթե մոգ արմատն իրոք գոյություն ունի, ապա այն կարող է ծագել իրանական աղբյուրից. հմմտ. ավ. maz-, սողդ. mē'γ. քրդ. mēzin «մեծ»: Ժիշտ է, առկա է ձայնավորման տարբերություն, բայց այն կարելի է բացատրել:

### Ն ա լ ա կ ա տ ի ք

V դարից սկսած գրավոր հուշարձաններում գործածված այս բառը նշանակել է ընդհանրապես բացման կամ տարեդարձի հանգես, արարողություն, որպես կրոնական տեղմին այն նշանակում է եկեղեցական տոնի նախօրյակ: Այս բառով հնում թարգմանվել է հուն. ἐρχαυία «(տաճարի) նորոգման տոնահանգես» բառը:

Կասկած չկա, որ մենք գործ ունենք իրանական փոխառության հետ, որի հաւա- բաղադրիչը ակնհայտորեն իրան. nāva- «նոր» բառն է, բայց կա-տի-f-ը ըստ Հ. Աճառյանի (ՀԱԲ, 3<sup>2</sup>, էջ 434) «ստույգ մեկնություն չունի դեռ»: Նա մերժում է բառը ինչպես կատարել, կերտել բայերի հետ կապելու, այնպես էլ Հ. Հյուբշմանի՝ իրան. kata- «տուն» բառի հետ նույնացնելու փորձը (իրրև \*navakata-). վերջին դեպքում տարբեր է հիմքի ձայնավորը, և կասկածելի վերականգնվող բարդության՝ հայերեն բառի հետ ունեցած կապը, մանավանդ որ Վանի ու Ողմի բարբառներում կատիf-ը կատիկ ձևով գործածված է առանձին, և Վանում կա ավագ-կատիկ «զատկի նավակատիք» (իրրև «ավագ կամ մեծ նավակատիք») բառը:

Անհավանական չէ կարծել, որ կատի-ն ծագում է իրան. kati- ձևից, որը նշանակում է «ցանկություն». այն կազմված է հ.-հ. \*ǩā- «հաճել, սիրել, տենչալ» արմատի իրանական -kā- «ձգտել», տենչալ» ժառանգորդից բայանվանակերտ -ti- ածանցով: Այս նույն արմատից է ծագում իրան. kāmā- հիմ-

<sup>5</sup> Հմմտ. C. Andreas. Mittelirantische Manichaica aus Chinesisch-Turkestan. Berlin, 1932, S. 50.

քը, որտեղից գալիս է հայ. կամ-ք, կամիլ բառերի կամ արմատը: Այս kati-բայանունը հանդիպում է հ. հնդկերենում որպես բարդությունների երկրորդ բաղադրիչ -տեն, -սեր, ցանկացող, ձգտող, պահանջող իմաստով:

Նաակատի բառը, այսպիսով ծագում է իրան. *navakāti*- ձեկց և բուն իմաստով նշանակում է «նորակամություն, նորատենչություն»:

#### Շ ու ֆ

Հնուց ի վեր գրավոր հուշարձաններում ավանդված շուֆ բառը ունի երկու հակադիր իմաստ՝ «ստվեր» և «փառք», վեհություն» (հմմտ. շֆեղ, շֆալ, «պանծալ»); Առաջարկված ստուգաբանություններից ոչ մեկը անբասիր չի կարելի համարել: Յ. Պոկորնու բառարանում<sup>6</sup> այն շաղ և շանք բառերի հետ միասին բխեցված է \*k'eu- «լուսավորել, փայլել, պայծառ» արմատից, բայց ուրիշ լեզուներում կազմությունը զուգահեռներ չունի: Այս պատճառով էլ մեր «Հայոց լեզվի պատմություն» մեջ<sup>7</sup> այդ ստուգաբանությունը բերված է կասկածով (հարցականով):

Կարծում ենք, որ շուֆ «փառք, վեհություն», շֆալ «պանծալ», շֆեղ բառերի շուֆ, շֆ- արմատը ծագում է իրանական աղբյուրից. հմմտ. պրսկ. *škoḥ*, դաս. պրսկ. *šukōh* «շուք, շքեղություն, վեհություն» (դասական պարսկերենի *u-*ի հավելումը երկրորդական է):

Կարելի է կարծել, որ մենք գործ ունենք երկու տարբեր աղբյուրների բաղադրման (կոնտամինացիայի) հետ. շուֆ «ստվեր, ծածկոց, հովանի» բառը, թերևս, գալիս է հ.-հ. \*skeu- «ծածկել» արմատի \*skheu- տարբերակից, մանավանդ եթե խռալ և (մառա)խռալ բառերի արմատը ծագում է նույն աղբյուրից:

#### Ս ա ն դ

Այս բառը, որ մատենագրության մեջ հանդիպում է V դարից սկսած և տարածված է հայ բարբառներում, նշանակում է «անկան, հավան» (աման, որի մեջ հացահատիկ են մանրացնում): Հ. Աճառյանի նշած ստուգաբանական փորձերը անհավաստի են, և մեր կողմից հնարավոր է համարվել, թեև հարցականով, այն կապել ակկադական *samādu(m)* «աղալ», *samndu(m)* «աղացած», *samīdu(m)* «մի տեսակ ալյուր» բառերի հետ, այսինքն՝ դիտել որպես ակկադական փոխառություն<sup>8</sup>: Սակայն այժմ մենք ավելի հավանական ենք համարում այն բխեցնել իրան. աղբյուրից. հմմտ. մ. պրսկ. *sandan* «զնդան, սալ», որ փոխառված է նաև արաբերեն գրական լեզվում<sup>9</sup>:

<sup>6</sup> J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern und München, 1959, I, S. 594.

<sup>7</sup> Գ. Բ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 207:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 470:

<sup>9</sup> Հմմտ. М. Белкин. Среднеиранские заимствования в арабском литературном языке.— Сб. Ирано-афразийские языковые контакты. М., 1987, с. 18.